

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆԻՍ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սեպական համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարթում ենք հաջողություն:

1 Ի՞նչ դեր ունի ողնուցը թռչունի կյանքում.

- 1) ամրանում են թոփշքն ապահովող կրծքամկանները
- 2) թոփշքի պահին պաշտպանում է քամուց
- 3) մեծացնում է կմախքի շարժունությունը
- 4) իրանի հուսալի հենարան է

2 Ինչպե՞ս է ձկան ողնաշարը միացած գանգին.

- 1) անշարժ
- 2) կիսաշարժում՝ երկու պարանոցային ողերով
- 3) շարժուն՝ երկու պարանոցային ողերով
- 4) կիսաշարժում՝ մեկ պարանոցային ողով

3 Որո՞նք են ժամտախտի հարուցիչները.

- 1) սնկերը
- 2) նախակենդանիները
- 3) բակտերիաները
- 4) վիրուսները

4 Ինչի՞ց են ստանում պենիցիլին դեղամիջոցը.

- 1) խմորասնկից
- 2) մրիկասնկից
- 3) մուկուրից
- 4) վրձնասնկից

5 Անատամի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) շնչում է թոքով
- 2) ունի ճառագայթային համաշափություն
- 3) եռաշերտ խեցու միջին շերտը ճենապակյա է
- 4) ունի փակ արյունատար համակարգ

6

Թվարկվող կաթնասուններից որի՞ն է բնորոշ կոյանոցի առկայությունը.

- 1) կենգուրուին
- 2) պարկավոր խլուրդին
- 3) պարկավոր սկյուռին
- 4) եքիդնային

7

Նշվածներից ո՞ր պնդումն է ճիշտ մարդու կոկորդի վերաբերյալ.

- 1) ձայնախորշը խոսելու պահին լայնանում է
- 2) կոկորդի մուտքը փակվում է մակոկորդի աճառով
- 3) կոկորդը գտնվում է շնչափողի և բրոնխների միջև
- 4) կոկորդի ամենալայն մասում ձգվում են ձայնալարերը

8

Ինչպիսի՞ միջավայրում է ակտիվ պեղսին ֆերմենտը.

- 1) ուժեղ հիմնային
- 2) քրվային
- 3) քույլ հիմնային
- 4) չեզոք

9

Նշված առանձնահատկություններից ի՞նչն է մազանոքներում արյան հոսքի արագության նվազման պատճառ.

- 1) մազանոքների պատերը բափանցելի են պլազմայի որոշ բաղադրիչների համար
- 2) արյան հոսքի արագությունը երակներում աստիճանաբար մեծանում է
- 3) մազանոքների լուսանցքի գումարային մակերեսը 500-600 անգամ գերազանցում է առրտայի լուսանցքի մակերեսին
- 4) երակների լուսանցքների ընդհանուր գումարային մակերեսը փոքր է, քան մազանոքներինը

10

Ո՞ր զգայարանից են նյարդային ազդակները հասնում մարդու մեծ կիսազնդերի կեղլի ծոծրակային բիլք.

- 1) տեսողական
- 2) լսողական
- 3) հոտառության
- 4) մաշկամկանային

11

Լեղին մարդու օրգանիզմում ո՞ր գործառույթն է իրականացնում.

- 1) Անխստացների արգելակում
- 2) ճարպերի ֆերմենտային ճեղքում
- 3) լիպազների ակտիվության ճնշում
- 4) գլիկոգենի սինթեզի ճնշում

12

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.

- 1) լայնանում են մաշկի արյան անոքները, և մեծանում է այստեղ մղվող արյան քանակը
- 2) աճում է արյան հոսքը դեպի մաշկ, իսկ մարմնի ջերմատվությունը նվազում է
- 3) նեղանում են մաշկի մազանոքների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմատվությունը
- 4) մաշկի արյան անոքները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմատվությունը մեծանում է

13

Ո՞ր պնդումն է ճիշտ հակամարմինների վերաբերյալ.

- 1) իրենցից ներկայացնում են թափառող բջիջներ
- 2) վնասազերծում են օտարածին նյութերը
- 3) յուրաքանչյուր հակամարմին կարող է ազդել տարբեր հակածինների վրա
- 4) կատարում են ֆագոցիտող

14

Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B₁ վիտամինի անբավարարության դեպքում.

- 1) քնի, հիշողության և ուշադրության խանգարում
- 2) հակամարմինների առաջացման խանգարում
- 3) կոպերի ներքին մակերևույթի բորբոքում
- 4) սակավարյունություն

15

Ի՞նչն է բնորոշ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) կենտրոնները գտնվում են վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցներում
- 2) անհատական են, առաջանում են ոչ պայմանական և անտարբեր գրգռիչների գուգակցումներից, կարող են արգելակվել
- 3) անհատական են, չեն արգելակվում
- 4) առաջանում են երկու ոչ պայմանական գրգռիչների գուգակցումից

16

Ո՞ր հորմոնի անբավարար քանակն է մանկական հասակում մարդու մոտ առաջացնում զաճաճոթյուն հիվանդոթյունը.

- 1) թիրօքսինի
- 2) աղրենալինի
- 3) գլյուկազոնի
- 4) աճի հորմոնի

17

Ինչպե՞ս են միմյանց միանում նույլեռոտիդներն ի-ՌՆԹ-ի մոլեկուլում.

- 1) մեկ նույլեռոտիդի ազոտական հիմքի և հարևան նույլեռոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով
- 2) մեկ նույլեռոտիդի ածխաջրի և հարևան նույլեռոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով
- 3) հարևան նույլեռոտիդների ազոտական հիմքերի միջոցով
- 4) մեկ նույլեռոտիդի ազոտական հիմքի և հարևան նույլեռոտիդի ածխաջրի միջոցով

18

Ո՞ր բակտերիաներն են օգտագործում ազոտային թթուն ազոտականի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան.

- 1) դենիտրիֆիկացնող
- 2) ազոտ ֆիքսող
- 3) նիտրիֆիկացնող
- 4) ամոնիֆիկացնող

19

Հետևյալ վիրուսներից ո՞րը չի դասվում ֆազերի շարքին.

- 1) թոքախտի հարուցչի վիրուսը
- 2) սիֆիլիսի հարուցչի վիրուսը
- 3) խոլերայի հարուցչի վիրուսը
- 4) ԶԻԱՀ-ի վիրուսը

20

Կապտականաչ ջրիմուտների քլորոֆիլը և այլ գունակները գտնվում են.

- 1) միտոքոնոպրիումներում
- 2) ուղղակի ցիտոպլազմայում
- 3) քլորոպլաստներում
- 4) Գոլցիի ապարատում

21

Ի՞նչ է նշանակում գենետիկական կողի ավելցուկայնություն.

- 1) միևնույն ամինաթրուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով
- 2) յուրաքանչյուր նույնականացնելու համար է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 3) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները գաղտնագրում են նույն ամինաթրուն
- 4) գեների միջև կան «ընդհատումներ»

22

Որտե՞ղ են սինթեզվում պոլիսախարիդները ճեղքավորող ֆերմենտները.

- 1) ողորկ էնդոպլազմային ցանցի վրա
- 2) պերօքսիստներում
- 3) լիզոսոմներում
- 4) հատիկավոր էնդոպլազմային ցանցի վրա

23

Ի՞նչ է տեղի ունենում դիալիիդ բջջի մեյուսիկ քաժանման ժամանակ.

- 1) առաջանում են չորս հապլոիդ բջիջներ
- 2) առաջանում են չորս դիալիիդ բջիջներ
- 3) առաջանում են երկու հապլոիդ բջիջներ
- 4) առաջանում են երկու դիալիիդ բջիջներ

24

Կրկնակի բեղմնավորման ժամանակ ի՞նչ է առաջանում վարսանդի սերմնարանի պատից.

- 1) պտուղ
- 2) պտղապատ
- 3) սերմ
- 4) սերմնամաշկ

25

Ո՞ր ժամանակահատվածում է յուրաքանչյուր քրոմոսոմ կրում երկու քրոմատիդ.

- 1) ինտերֆազի սկզբից մինչև պրոֆազ
- 2) պրոֆազում և մետաֆազում
- 3) անաֆազից մինչև ինտերֆազի S փուլը
- 4) ինտերֆազի G₁ փուլից մինչև թելոֆազ

26

Ո՞ր պնդումն է միշտ սողունների և քոչունների սաղմնային զարգացման գաստրոլացման փուլի վերաբերյալ.

- 1) Վեգետատիվ քևեռի բջիջները սողում են դեպի անիմալ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են էնտոդերմը
- 2) անիմալ քևեռի բջիջները սողում են դեպի վեգետատիվ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են երկշերտ սաղմը
- 3) սաղմնային սկավառակը ճեղքվում է երկու թերթիկի. արտաքին՝ էնտոդերմի և ներքին՝ էնտոդերմի
- 4) Երկշերտ սաղմն առաջանում է բլաստուլի պատի ներփքումով բլաստուլի խոռոչի մեջ

27

Ո՞ր հիվանդության դեպքում է տղամարդկանց մոտ առկա հավելյալ X քրոմոսոմ.

- 1) ալբինիզմ
- 2) «մլավոցի սինդրոմ»
- 3) Քլայնֆելտերի սինդրոմ
- 4) Շերնշևկու և Թերների սինդրոմ

28

Ինչպիսի՞ գենոտիպեր կունենան երեխաները, եթե մայրը առողջ է և կրում է դալտոնիզմի գենը, իսկ հայրը հիվանդ է ըստ այդ հատկանիշի.

- 1) $X^D X^d$, $X^d X^d$, $X^D Y$, $X^d Y$
- 2) $X^D X^d$, $X^d Y$, $X^D X^D$
- 3) $X^D X^D$, $X^d X^d$, $X^D Y$, $X^d Y$
- 4) $X^D X^D$, $X^D X^d$, $X^D Y$, $X^d Y$

29

Որքա՞ն է ոլորի սերմերի կանաչ գույնը և կնճռոտ մակերևույթը պայմանավորող գենոտիպերի առավելագույն թիվը.

- 1) 9
- 2) 4
- 3) 3
- 4) 1

30

Ո՞ր պնդումն է սխալ մեղուների վերաբերյալ.

- 1) մեղուների էգերի բոլոր քջիջներն ունեն քրոմոսոմների ռիալիտի հավաք
- 2) մեղուների օրգանիզմում սեռական քրոմոսոմներ չկան
- 3) մեղուների սպերմատոզովիների զարգացումն ընթանում է մեյօզով
- 4) մեղուների արուները զարգանում են կուսածնությամբ և ունեն քրոմոսոմների հավալիտի հավաք

31

Ո՞ր գենոտիպերի դեպքում է երկու ալելով էլ ոչ լրիվ դոմինանտության ժամանակ երկիրքի խաչասերումից հետո սերնդում ստացվում միակերպություն՝ ըստ ֆենոտիպի.

- 1) AaBb և AABB
- 2) AABB և aabb
- 3) AABb և AABb
- 4) AaBb և AaBb

32

Ի՞նչն է հանգեցնում կղզիներում ապրող միջատների անքև ձևերի առաջացմանը.

- 1) մեկուսացումը
- 2) շարժական ընտրությունը
- 3) կայունացնող ընտրությունը
- 4) սեռական ընտրությունը

33

Էկոհամակարգի ո՞ր գործառական բաղադրիչները կարող են լինել հետերոտրոֆները.

- 1) պրոդուցենտներ և ռեդուցենտներ
- 2) կոնսումենտներ և ռեդուցենտներ
- 3) պրոդուցենտներ և կոնսումենտներ
- 4) առաջին և երկրորդ կարգի պրոդուցենտներ

34

Ինչի՞ խանգարման հետևանք է մարդու մոտ ատավիզմների ի հայտ գալը.

- 1) մետաբոլիզմի
- 2) սաղմնային զարգացման
- 3) ֆիլոգենեզի
- 4) հետսաղմնային զարգացման

35

Նշված օրգանիզմներից ո՞րը չի կարող հանդիսանալ երկրորդ կարգի կոնսումենտ.

- 1) տիֆի հարուցիչը
- 2) մարդը
- 3) սարացենիան
- 4) գաղձը

36

Տեսակի ո՞ր չափանիշի հիմքում է ընկած մի տեսակի առանձնյակների կենսագործունեության գործընթացների՝ առաջին հերթին բազմացնան նմանությունը.

- 1) կենսաքիմիական
- 2) գենետիկական
- 3) ֆիզիոլոգիական
- 4) ձևաբանական

(37-38) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից գոլորշիացավ 1,2 կգ
քրտինք: 1 գրամ քրտինքի գոլորշիացնան համար ծախսվում է 2,45 կԶ էներգիա:

37

Քանի՞ կԶ էներգիա հեռացավ օրգանիզմից քրտինքի գոլորշիացման հետևանքով.

- 1) 2,94
- 2) 2940
- 3) 490
- 4) 2,04

38

Մոտավորապես քանի՞ Զոռու էներգիա հեռացավ մաշկի 1 սմ² մակերևույթից.

- 1) 1,47-1,96
- 2) 61-82
- 3) 147-196
- 4) 510-680

- (39-40) Պոմիդորի պտղի կլոր ձևը դոմինանտում է տանձաձևի նկատմամբ:
Դաշտում եղած քոյսերից 1440-ը ունի կլոր ձևի պտողներ, իսկ 488-ը՝ տանձաձև:

39

Քոյսերից քանի՞սն են հոմոզիգոտ, եթե դաշտում եղած քիերը ստացվել են միևնույն ծնողական ձևերից.

- 1) 1440
- 2) 488
- 3) 960
- 4) 968

40

Քոյսերից քանի՞սն են հետերոզիգոտ, եթե դաշտում եղած քիերը ստացվել են միևնույն ծնողական ձևերից.

- 1) 1440
- 2) 488
- 3) 960
- 4) 968

41

Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզմին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

- A. փոքր ու մեծ մասերի միակցմանը
մասնակցում են կալցիումի իոնները
- B. սարկոպլազմային ցանցի կազմավորում
- C. սպիտակուցի կենսասինթեզ
- D. ներբջջային մարսողություն
- E. պոլիսարիդների սինթեզ
- F. մարսում են միտոքոնդրիումներ
- G. բնորոշ է բոլոր բջիջներին
- H. մասնակցություն բաժանման իլիկի
առաջացմանը

Օրգանիզմ

- 1. հարթ էնդոպլազմային ցանց
- 2. ոիլոսում
- 3. լիզոսում
- 4. բջջային կենտրոն

42

Ի՞նչ համապատասխանություն կա տարբեր կենդանիների (նշված է ձախ սյունակում) և դրանց հետսաղմնային զարգացման ձևերի (նշված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կենդանի

Հետսաղմնային զարգացման ձևերը

- | | |
|------------------|---------------------------------------|
| A. ականջմտուկ | 1. թերի կերպարանափոխությամբ զարգացում |
| B. մողես | 2. լրիվ կերպարանափոխությամբ զարգացում |
| C. տզրուկ | 3. ուղղակի զարգացում |
| D. մայիսյան բգեց | |
| E. սարդ | |
| F. ծղրիդ | |
| G. թիթեռ | |

43

Ո՞ր կենդանուն (նշված է աջ սյունակում) կենսագործունեության ո՞ր առանձնահատկությունն է բնորոշ (նշված է ձախ սյունակում): Նշել միշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Կենսագործունեության առանձնահատկություն

Կենդանի

- | | |
|---|----------|
| A. դաստակը կազմված է չորս, իսկ թաթը՝ հինգ մատներից | 1. գորտ |
| B. մարմինը պատված է եղջերային թեփուկներով | 2. մողես |
| C. շնչում է թոքերով և մաշկով | |
| D. կերպարանափոխության ընթացքում անցնում են թռային շնչառության | |
| E. թեղմնավորումն արտաքին է | |
| F. սրտի փորոքն ունի ոչ լրիվ զարգացած միջնապատ | |
| G. ողնաշարը կազմված է պարանոցային, իրանային, սրբանային և պոչային բաժիններից | |
| H. ունեն պարանոցային մեկ ող | |

44

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

- A. լցնում է նեֆրոնի պատիճը
- B. առաջանում է հետաղարձ ներծծման արդյունքում
- C. լցնում է երիկամի ավազանը
- D. առաջանում է ֆիլտրման եղանակով
- E. օրվա ընթացքում առաջանում է 150-170լ
- F. բաղադրությամբ մոտ է արյան ալլազմային
- G. հոսում է հավաքող խողովակով

Մեզի տեսակ

- 1. առաջնային
- 2. երկրորդային

45

Մարդու նյարդային համակարգի ո՞ր բաժնին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

- A. կենտրոնները գտնվում են զիսուլեղի որոշ բաժիններում և ողնուղեղի գորշ նյութի կողմնային եղջյուրներում
- B. կարգավորում է ներքին օրգանների աշխատանքը
- C. ենթարկվում է մարդու կամքին և զիտակցությանը
- D. ունի հատուկ կենտրոնաձիգ զգացող ուղիներ
- E. չի ենթարկվում մարդու կամքին և զիտակցությանը
- F. նյարդաբեկրող պատված են միելինային բաղանքով
- G. վերահսկում է կմախքային մկանների աշխատանքը

**Նյարդային
համակարգի բաժին**

- 1. ինքնավար
- 2. մարմնական

46

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում սպերմատոզենեզի գործընթացները:
Նշել ճիշտ հերթականությունը.

1. բջիջների աճ, ԴՆԹ-ի կրկնապատկում
2. սպերմատոզորիդների ձևավորում
3. դիպլոիդ բջիջների բաժանում՝ միտոզով և սկզբնական սեռական բջիջների թվի ավելացում
4. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
5. կրկնակի քրոմատիդներից կազմված քրոմոսոմների հավլուիդ հավաքակազմով բջիջների առաջացում
6. սպերմատիդների առաջացում
7. կոնյուգացիա և տրամախաչում

47

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունեցել նշված փոփոխությունները
էվոլյուցիայի ընթացքում: Նշել ճիշտ հերթականությունը.

1. կոպերի առաջացումը
2. սեռական բազմացման առաջացումը
3. արյան շրջանառության փակ համակարգի առաջացումը
4. նյարդային համակարգի առաջացումը
5. ընկերքի առաջացումը

48

Ինչպիսի՞ն է լյարդի ծծանի զարգացման փուլերի հաջորդականությունը՝ սկսած
հիմնական տիրոջ օրգանիզմից դուրս գալու պահից: Նշել ճիշտ
հաջորդականությունը.

1. ցիստավորված թրթուր
2. թարթիչավոր թրթուր
3. պոչավոր թրթուր
4. թրթուրի զարգացումը լճախխունջի մարմնում
5. սեռահասուն լյարդի ծծանը խոշոր եղջերավոր անասունի լյարդում
6. ձու

49

Ինչպիսի՞ն է մարդու տեսողական վերլուծիչում գործընթացների հաջորդականությունը սենյակի քոյլ լուսավորվածության պայմաններում:
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. տեսողական զգայության ձևավորում
2. բրի լայնացում
3. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղևի ծոծրակային բիլք
4. ակնաբյուրեղի կորության փոփոխում
5. լույսի ճառագայթների անցում եղջերաբաղանքով
6. թարթիչավոր մարմնի մկանների կծկում
7. ցույլիկների և սրվակների գործում

50

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու շնչառության ժամանակ՝ սկսած հյուսվածքներում նյութափոխանակությունից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բոքերի ծավալի մեծացում
2. գազափոխանակություն բոքաբշտերի օդի և մազանոթներով հոսող արյան միջև
3. բոքերում օդի ճնշման բարձրացում
4. արյան մեջ ածխաբթու գազի խտության մեծացում
5. միջկողային մկանների բուլացում
6. շնչառական կենտրոնի դլրում
7. ստոծանու մկանների կծկում
8. բոքերում օդի ճնշման անկում
9. օդի ներթափանցում բոքեր

51

Ինչպիսի՞ն է մարսողության լնթացքում գործընթացների հաջորդականությունը:
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ենթաստանորսահյութի և աղիքահյութի ֆերմենտների ակտիվություն
2. ճարպաթթուների և զլիցերինի փոխազդում միաշերտ էպիթելի բջիջներում
3. ածխաջրերի ճեղքում քոյլ հիմնային միջավայրում
4. ճարպերի թափանցում ավշային մազանոթներ
5. սպիտակուցների բնափոխում թթվային միջավայրում
6. օրգանիզմին բնորոշ ճարպերի առաջացում

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. որքան լայն է հատկանիշի ռեակցիայի նորման, այնքան մեծ են շրջակա միջավայրին հարմարվելու օրգանիզմի հնարավորությունները
2. մեղրուզան, սրատուտը, լճախսունջը, ինֆուզորիան, պոլիա հիդրան եռաշերտ օրգանիզմներ են
3. դրոզոֆիլի աչքի գույնն առտոսոմային հատկանիշ է, և այն պայմանավորող գենը գտնվում է Y քրոմոսոմում
4. բրախիդակտիլիան պայմանավորված է գենոտիպում մեկ դրմինանտ գենի առկայությամբ, որը պայմանավորում է կմախքի զարգացման խանգարումներ և դրմինանտ հոմոզիգոտների մոտ հանգեցնում է մահվան
5. սիմետրիկ տրանսլոկացիայի ժամանակ մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը կարող է միանալ մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չունեցող հատվածին
6. թոշունները, սողունները և որոշ պոչավոր երկկենցաղներ օժտված են արական հետերոգամետությամբ

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. մողեսի կողոսկրերի առաջին հինգ գույգը փորային կողմում միաձուլվում են կրծոսկրին
2. ձկների առջևի ուղեղից դուրս են գալիս աչքը շարժող նյարդերը
3. անձրևորդերի արտաքրորդան համակարգը ներկայացված է յուրաքանչյուր հատվածում տեղադրված գույզ ձագարաձև խողովակներով, որոնք դեպի դուրս բացվում են նեղ անցքերով
4. թոշունների ձախ փորոքից դուրս է գալիս առտայի աջ աղեղը
5. եզիպտացորենի սերմի հիմնական պաշարանյութերը գտնվում են շաքիններում
6. ինֆուզորիայի օրգանիզմից ջրի ավելցուկը դուրս է բերվում կծկուն վակուոլի միջոցով

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. գլխուղեղի նեյրոնների մարմիններն առաջացնում են սպիտակ նյութ
2. միջին ուղեղում տեղակայված կենտրոնները կարգավորում են քրի մեծությունը, ակնաբյուրեղի կորությունը
3. միզարձակման կենտրոնը տեղակայված է ողնուղեղի կրծքային քաժնում
4. սիմպաթիկ նյարդերով հաղորդվող նյարդային ազդակները հանգեցնում են ուղեղի անոքների լայնացմանը
5. մակերիկամներում արտադրվում է նորադրենալին հորմոնը, որը բարձրացնում է արյան ճնշումը
6. անդաստակային օրգանում տեղակայված է մազիկավոր բջիջներից կազմված կորտյան օրգանը
7. նախասինապսային թաղանթը աքսոնի վերջավորության թաղանթն է

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ԴՆԹ-ի կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդները իրենց կառուցվածքով և կազմով տարբերվում են ՈՆԹ-ների կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդներից
2. ֆոտոսինթեզի լուսային փուլում թթվածինն առաջանում է ջրի ֆոտոլիզի հետևանքով
3. վարսանդի սպիի վրա փոշեհատիկը ծլում է և առաջացնում սերմնասկզբնակ, որում ձևավորվում են ուր բջիջներ
4. ֆոսֆոլիզիդների ոչ ճարպաթթվային մասերում հանդիպում են լիցրեր կրող տարբեր կողմնային խմբեր և այս լիսիդները բջջարդանթներում կատարում են կառուցողական ֆունկցիա
5. կապտականաց ջրիմուները պլարունակում են քլորովլաստներ, որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պլատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի անջատումով
6. պլազմալեմի լիսիդային երկշերտում լիսիդների ճարպաթթվային «պոչիկներն» ուղղված են դեպի ներքին հատված, իսկ լիսիդների «զլխիկները»՝ դեպի արտաքին կողմերը
7. կորիզաքաղանքի ներքին թաղանթը պատված է ոիքոստմներով և Գոլջիի ապարատի և էնդովլազմային ցանցի խողովակների հետ առաջացնում է ընդհանուր համակարգ

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. լրիվ դոմինանտուրյան դեպքում երկիետերողիզոս զույգերի խաչասերումից ստացված սերնդում ճեղքավորումն ըստ Գենոտիպի 1:2:1 հարաբերությամբ է
2. ալեյոտրոպիան հետերոզիզոս առանձնակում տարբեր ոչ ալելային զույգերի երկու գեների գործունեության հետևանքով հատկանիշի դրսնորման երևույթն է
3. էալիստագ առաջացնող գեներին անվանում են արգելակիչ գեներ
4. պոլիմերիայի օրինակ է այն երևույթը, երբ ոլորի կարմիր ծաղիկներ պայմանավորող գենը որոշում է նաև կարմրավուն ցողունի առաջացումը
5. բնական ընտրությունն ուղղորդված բնույթ ունի
6. ինֆուզորիաները բազմանում են սպորներով և կոնյուգացիայի եղանակով

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. բարակ աղու բաժիններն են՝ տասներկումատնյա աղին, բարակ աղի, կույր աղի
2. բոքային բոքամզային բաղանթը պատում է կրծքավանդակի պատը ներսից և կազմված է էպիթելիային հյուսվածքից
3. ավիշը բաղադրությամբ նման է արյան պլազմային, միայն ավիշում սպիտակուցների քանակը 3-4 անգամ պակաս է
4. բոքային երակներով հոսում է զարկերակային արյուն
5. մարդու արյան խումբը պայմանավորում են A և B ազլուտինոգենները և ուզու գործոնը
6. սիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ ուժեղանում է ջրի հետադարձ ներծծումը և մեզը պակասում է

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. կարապուսի և հոլոտուրիայի փոխազդեցությունը կոռպերացիայի օրինակ է
2. օրգանիզմներն իրենցից ներկայացնում են բաց կենսաբանական համակարգեր
3. օդը վատ ջերմահաղորդիչ է, ինչը դժվարացնում է օրգանիզմում առաջացող ջերմության պահպանումը
4. քարածուխը, կրային ապարները կենսածին նյութեր են
5. կույր օձերի և վիշապների վերջույթների մնացորդները ատավիզմներ են
6. կոնվերգենցիայի օրինակ է կետանմանների և թիոտանիների թիանման վերջույթներ ձեռք բերումը

- (59-60) Եկոհամակարգ մտնող էներգիայի միակ աղբյուրն Արեգակնային լույսն է, որի գումարային էներգիան մեկ տարվա ընթացքում կազմում է $1,6 \cdot 10^8$ կՎ:
Ֆուսոսինթեզի օգտակար գործողության գործակիցը հավասար է 1,2%:
Եկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝
բույսեր - բուսակեր կենդանիներ - գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ:

59

Զանի^o մակարույժ կարող է սմվել տվյալ համակեցուրյան գիշատիչների հաշվին,
եթե մեկ մակարույժի զանգվածը 1 գ է, իսկ մակարույժների 1 կգ գումարային
զանգվածում պարունակում է $4 \cdot 10^4$ կՎ էներգիա: Ընդունել, որ յուրաքանչյուր
մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 10%-ը:

60

Որոշել էներգիայի կորուստը (կՎ) սննդան շղթայի գիշատիչներ - գիշատիչների
մակարույժներ օղակում:

(61-63) $2,7054 \cdot 10^{-12}$ գ զանգվածով բակտերիայի քջում պարունակում է 15000 ռիբոսոմ, որոնց ընդհանուր զանգվածը կազմում է բակտերիայի զանգվածի 3 %-ը:

61

Զանի^o դալտոն է կազմում մեկ ռիբոսոմի միջին զանգվածը: Հաշվի առնել, որ 1 դալտոնը հավասար է $1,67 \cdot 10^{-24}$ գ: Պատասխանը բաժանել 1000-ի:

62

Սպիտակուցի քանի^o մոլեկուլ կա մեկ ռիբոսոմում, եթե սպիտակուցի միջին մոլեկուլային զանգվածը 30000 դալտոն է և սպիտակուցների ընդհանուր զանգվածը կազմում է ռիբոսոմի զանգվածի 50%-ը:

63

Զանի^o նուկլեոտիդից է բաղկացած ռիբոսոմի սպիտակուցը կողավորող գենը, եթե մեկ ամինաքրուզային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 120 դալտոն է:

(64-66) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու զիսուղեղը օրվա ընթացքում ստացել է 1137,24 լ արյուն: Ֆիզիկական աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,6 անգամ, օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալն աճել է 25%-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 1,8, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝ 1,2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում, սրտի բռնորաշրջանի տևողությունը 0,8 վրկ է, մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 65 մլ արյուն և զիսուղեղը ստանում է արյան շրջանառության մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը:

64

Քանի՞ ժամ է տևել ֆիզիկական աշխատանքը:

65

Մեկ օրվա ընթացքում քանի՞ լիտր քրվածին է օգտագործվել օրգանիզմում, եթե մարդը մեկ օրվա ընթացքում քնած է եղել 7 ժամ:

66

Ֆիզիկական աշխատանք կատարելու ընթացքում քանի՞ լիտր քրվածին է ստացել երիկամը, եթե երիկամներ է հասնում առոտա մղված արյան ծավալի 20%-ը:
Պատասխանը բազմապատկել 10-ով:

67

Գլյուկոզի ճեղքման անթրվածին փուլում անջատված ջերմային էներգիայի 20 %-ը՝ 588 կՋ, հեռացվել է օրգանիզմից գոլորշիացման միջոցով: Որոշել ամրող պրոցեսի օգտակար գործողության գործակիցը (%-ով), եթե հայտնի է, որ ամրող պրոցեսի արդյունքում առաջացել է 672 մոլ H₂O: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կՋ էներգիա: Պատասխանում ստորագրելուց հետո պահպանել մեկ թիվ և պատասխանը բազմապատճել 10-ով:

68

Ֆոտոսինթեզի պրոցեսում բազմանյա մեկ ծառը 30 օրվա ընթացքում (16-ժամյա լուսային օր) արտադրել է 25088 լ քրվածին: 1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ: Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (մ²):

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Մխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Քոտոսինթեզի մթնային փուլի ռեակցիաներին մասնակցող ոիբուզարիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտները գտնվում են հիմնականում քլորոպլաստների ստրոմայում
2. Կորիզավոր բջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաքրուն թթվածնի բավարար քանակության պայմաններում ենթարկվում է հետագա ճեղքման, որի արդյունքում առաջանում է ացետիլ-կոֆերմենտ A և հետո ամցնում է միտոքրոնողիումներ
3. Չը հետ փոխագրեցության արդյունքում ԱԵՖ-ում ածխաջրի և ֆոսֆորական թթվի միջև առկա կապը ճեղքվում է, և ԱԵՖ-ը ձևափոխվում է ԱԿՖ-ի
4. ԱԵՖ-ի կազմության մեջ մտնում են աղենինային ազոտական հիմքի մնացորդը, դեօքսիիբոզ ածխաջուրը և ֆոսֆորական թթվի երեք մնացորդ
5. Օրսիդային ֆոսֆորիլացումը միտոքրոնողիումներում ածխաջրերի, ճարպերի օրսիդացման արդյունքում առաջացած էներգիայի հաշվին ԱԵՖ-ի սինթեզն է
6. Գլյուկոզի ճեղքավորման թթվածնային փուլում ՆԱԴ·Հ₂-ի և ՖԱԴ·Հ₂ -ի պլոտոնների և էլեկտրոնների վերջնական ակցեպտորը մոլեկուլային թթվածինն է

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Մխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. աջ և ձախ կրծուկրաանրակապտկաձև մկանների հաջորդական կծկման դեպքում նրանք հանդես են գալիս որպես սիներգիստներ և գլուխը թեքվում է աջ-ձախ
2. Վեգը ոտնաքարի խոշոր ոսկրերից է
3. Կողոսկրերը ողերին միացած են անշարժ միացմամբ
4. Ապարանցային առաջին ողը ունի մարմին և երկու հոդաելուստներ, որոնց վրա հենվում է գանգը
5. Դելտայաձև մկանը տեղակայված է բազկային հողի վերևում
6. արտաքին միջկողային մկաններն իրականացնում են արտաշնչումը